

Ի տարբերություն ֆինանսական վարձակալության, գործառնական վարձակալության դեպքում, համաձայն ՀՀՍՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի, վարձակալի կողմից վարձավճարները ծախս են ճանաչվում համապատասխան ժամանակաշրջաններում: Վարձատուն վարձակալության հանձնված ակտիվը շարունակում է հաշվառել որպես ակտիվ, իսկ ստացված լիզինգավճարները որպես եկամուտ են ճանաչվում:

Վերոնշյալ լիզինգային հաշվառման սկզբունքները, չնայած, տարիներ շարունակ չեն փոփոխվել, սակայն հաճախ քննադատությունների առիթ են տվել: Քննադատությունների հիմնական պատճառն այն է, որ վարձակալական գործարքների դասակարգումը ֆինանսական և գործառնական վարձակալությունների կարող է տանել նրան, որ նմանատիպ գործառնությունները բավականին տարբեր կերպ արտացոլվեն հաշվետվություններում: Ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների խորհուրդը (ՖՀՄԽ) և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդն այժմ աշխատում են լիզինգային գործարքների հաշվառումը կարգավորող ստանդարտի շուրջ, որը պետք է առաջարկի գործառնական և ֆինանսական վարձակալությունների հաշվապահական հաշվառման մեկ ընդհանուր մոտեցում: Խորհուրդները կարծում են, որ բոլոր լիզինգային գործարքները պետք է հաշվառվեն այն նույն սկզբունքով, որով հաշվառվում են ֆինանսական վարձակալության գործարքները, քանի որ երկու դեպքում էլ լիզինգառուն ձեռք է բերում ակտիվի օգտագործման իրավունքը՝ դրա դիմաց կատարելով համապատասխան վճարումներ, իսկ լիզինգատուն այդ վճարումների դիմաց հանձնում է ակտիվի օգտագործման իրավունքը լիզինգառուին:

ՔՐԻՍՏԻՆԵԲԱՂԱՍԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոբանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող*

ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՆԱՀԱՏՄԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերության նվազեցումն է: Համայնքներին չի կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացված ֆինանսական միջոցների ուղղում կոնկրետ ծախսերի իրականացմանը: Դրանց ծախսման ուղղությունները սահմանում են ՏԻՄ-երը:

Ելնելով պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջև եկամուտների բաշխումից, ինչպես նաև համայնքային բյուջեներով կատարվող ծախսերի, դրանց ամրակցված սեփական եկամուտների և ընդհանուր հանրապետական հարկերի մասհանումների միջոցով ստացվող եկամուտների հարաբերակցությունից, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կառավարության համաձայնությամբ որոշում է դոտացիաների, սուբվենցիաների ու սուբսիդիաների չափերը, որոնք պետական բյուջեից հատկացվում են առանձին համայնքային բյուջեներին:

Դոտացիան՝ ֆինանսական օգնության կամ օժանդակության ձև է: Այն տրվում է ան

հատույց կարգով առանձին համայնքային բյուջեներին, դրանց եկամուտների ու ծախսերի միջև գոյություն ունեցող դեֆիցիտը փակելու համար՝ չառանձնացնելով դրա օգտագործման ուղղություններն ու նպատակները: Դա նշանակում է, որ տեղական բյուջեները տնօրինող մարմիններն իրենք են որոշում դոտացիոն գումարների օգտագործման ուղղությունները:

Սուբվենցիան՝ ֆինանսական օգնության այնպիսի ձև է, որը տրվում է անհատույց կոնկրետ ընթացիկ ծախսեր կամ կապիտալ ծրագրեր ֆինանսավորելու համար: Դոտացիայի համեմատությամբ սուբվենցիայի օգտագործման նպատակայնությունն այն դարձնում է հիմնավորված, իսկ կիրառումը՝ հեշտ վերահսկելի: Այլ նպատակով օգտագործելու դեպքում սուբվենցիոն գումարները ենթակա են վերադարձման:

Սուբսիդիան՝ ֆինանսական օժանդակության այնպիսի ձև է, որը պետական բյուջեից տրվում է համայնքային բյուջեներին կամ կազմակերպություններին անհատույց կարգով և որոշակի նպատակի համար. այն հատկացնելիս, սովորաբար հիմք է ընդունվում սոցիալական բնույթի (մշակութային, առողջապահության, ընդհանուր կրթության և այլն) ֆինանսավորման ծրագրերի կատարումը: Ոչ նպատակային օգտագործման դեպքում սուբսիդիաները ենթակա են վերադարձման:

Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը¹ (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) հաշվարկվում է՝ հիմք ընդունելով տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս, քան 4 տոկոսը:

Դոտացիաների հաշվարկման հիմքում դրվում են հետևյալ գործոնները²: Դոտացիաների գումարների չափը հաշվարկվում է ըստ առանձին համայնքների բյուջեների, վերջիններս տարանջատելով՝

- 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների.
- 300-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների:

Դոտացիաների գումարների չափն ըստ 300-ից ավելի բնակիչ ունեցող առանձին համայնքների որոշվում է հիմք ընդունելով վերջիններիս տնտեսական վիճակը բնութագրող հետևյալ գործոնները՝

- համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի և գույքահարկի հաշվարկային մակարդակը (ա) գործոն,
- համայնքի բնակչության թիվը (բ) գործոն:

Դոտացիաների հաշվարկման կարգը .

(ա) գործոնով և 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը չպետք է պակաս լինի նախորդ բյուջետային տարում եկամտահարկի, հողի հարկի և գույքահարկի փաստացի մուտքերի հանրագումարի քսանհինգ տոկոսից, իսկ (բ) գործոնով նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը՝ նախորդ բյուջետային տարում եկամտահարկի փաստացի մուտքերի ընդհանուր գումարի տասը տոկոսից :

¹ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 20:

² «Ֆինանսական համահարթեցման» մասին ՀՀ օրենք, հոդված 5:

³ «Ֆինանսական համահարթեցման» մասին ՀՀ օրենք, հոդված 6:

Յուրաքանչյուր բյուջետային տարում ըստ առանձին համայնքների դոտացիայի հաշվարկման ժամանակ հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության պետական վիճակագրական մարմինների կողմից ներկայացված՝ նախորդ բյուջետային տարվա հունվարի 1-ի դրությամբ հանրապետության մշտական բնակչության թիվը՝ ըստ համայնքների:

Յուրաքանչյուր բյուջետային տարում դոտացիաների ընդհանուր գումարների չափերը՝ ըստ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող, ինչպես նաև (ա) և (բ) գործոններով դոտացիաներ ստացող համայնքների, սահմանվում է տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով:

300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիաները հաշվարկվում են հավասարաչափ:

Յուրաքանչյուր բյուջետային տարում (ա) գործոնով ըստ առանձին համայնքների դոտացիայի հաշվարկման ժամանակ հիմք են ընդունվում գույքահարկով, ինչպես նաև հողի հարկով հարկվող հաշվառումը վարող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից ներկայացված՝ նախորդ բյուջետային տարվա հուլիսի 1-ի դրությամբ տվյալների հիման վրա հաշվարկված համայնքների բյուջեների համապատասխան ցուցանիշները:

(ա) գործոնով դոտացիա է նախատեսվում բոլոր այն համայնքների (բացառությամբ 300 փց ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների) բյուջեներին, որոնց բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի և գույքահարկի գծով եկամտի մակարդակը ցածր է հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի, գույքահարկի և (ա) գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիաների ընդհանուր գումարի գծով միջին եկամտի սահմանային մակարդակից: Այդ սկզբունքով առանձին համայնքին նախատեսվող դոտացիայի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U = (U - Z) \times F \times G$$

որտեղ՝

U-ն՝ (ա) գործոնով տվյալ համայնքին նախատեսվող դոտացիայի գումարն է.

U-ն՝ հանրապետության (բացառությամբ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների) բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի, գույքահարկի և (ա) գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիաների ընդհանուր գումարի գծով միջին եկամտի սահմանային մակարդակն է, որն իր հերթին որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \frac{1}{N} \sum_{i=1}^N (S_i + T_i) / (F \times G)$$

որտեղ՝

T-ն՝ (ա) գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիաների ընդհանուր գումարն է.

S-ն՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա դոտացիայի հաշվարկներում կիրառվող տվյալ համայնքի (որը չի պատկանում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների թվին) բյուջեի հողի հարկի հաշվարկային ցուցանիշն է.

T-ն՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա դոտացիայի հաշվարկներում կիրառվող տվյալ համայնքի (որը չի պատկանում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների թվին) բյուջեի գույքահարկի հաշվարկային ցուցանիշն է.

F-ն՝ տվյալ համայնքի (որը չի պատկանում 300-ից ավել բնակիչ ունեցող համայնքների թվին) բնակչության թիվն է.

Հ-ն՝ տվյալ համայնքի (որը չի պատկանում 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների թվին) բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի և գույքահարկի գծով եկամտի մակարդակն է, որը ցածր է հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող՝ հողի հարկի, գույքահարկի և (ա) գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիաների ընդհանուր գումարի գծով միջին եկամտի սահմանային մակարդակից և իր հերթին որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Հ = (S + \Omega) / F$$

Գ-ն՝ միջին կարգավորիչ գործակիցն է, որն իր հերթին որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Գ = \Gamma / (X - Z) \times F]$$

(բ) գործոնով դոտացիա է նախատեսվում բոլոր համայնքների (բացառությամբ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների) բյուջեներին՝ տվյալ համայնքի բնակչության թիվը բազմապատկելով մեկ շնչին ընկնող դոտացիայի մեծությամբ: Վերջինս հաշվարկվում է (բ) գործոնով նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարը հարաբերելով հանրապետության (բացառությամբ 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող համայնքների) բնակչության ընդհանուր թվին:

Դոտացիաների գումարները յուրաքանչյուր համայնքի հատկացվում են ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան գանձապետական ստորաբաժանումներում յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշիվների միջոցով՝ ըստ ամսական կամ եռամսյակային հատկացման ժամանակացույցի:

Երկրորդը՝ սուբվենցիան, իրենից ներկայացնում է պետական բյուջեից համայնքների ընթացիկ և կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային անհատույց հատկացումներ, որոնք ՏԻՄ-երի կողմից ըստ նպատակի չիրացվելու դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

Ինչ վերաբերում է սուբվենցիաներին, ապա ամեն տարի ՀՀ կառավարությունը որոշում է դրանց տրամադրման չափանիշները և նախատեսված միջոցների բաշխումը՝ քննության առնելով համայնքների կողմից սուբվենցիա ստանալու նպատակով ներկայացված ներդրումային ծրագրերը (հայտերը): Այս հատկացումների՝ դոտացիաների և սուբվենցիաների սահմաններում ՀՀ կառավարությունը պատասխանատվություն է կրում համայնքների առջև, իրենց հերթին համայնքները ևս պատասխանատվություն են կրում ՀՀ կառավարության առջև՝ ստացած հատկացումների արդյունավետ օգտագործման համար:


2000-2011թթ. ընկած ժամանակահատվածում համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները աճել են շուրջ 5 անգամ (աղյուսակ 1): 2000 թվականի 6 մլրդի փոխարեն 2011 թվականին «Պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված է 32.4 մլրդ ՀՀ դրամ: 2004 թվականից սկսած համայնքներին տրամադրվում են նպատակային դրամաշնորհներ, սուբվենցիաներ: Ընթացիկ սուբվենցիաները 2011 թվականին «Պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված է 6.2 մլրդ դրամ: 2011 թվականի «Պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված ամբողջ նպատակային սուբվենցիան տրամադրվում է Երևան քաղաքին: 2009 թվականին համայնքներին տրամադրվել են նաև կապիտալ սուբվենցիաներ:

Համայնքներին տրամադրվող դոտացիաները և սուբվենցիաները
2000-2011թթ. (մլն դրամ)¹

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	6,09	7,64	7,64	9,15	10,69	13,75	14,58	17,59	20,98	27,49	32,42	32,42
Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին	0	0	0	0.00	0.13	338.29	349.55	879.95	495.48	78.38	5,37	6,22
Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին	0	0	0	0	0	0	0	0	0	1,29	0	136.48

Գծապատկեր 1

Համայնքներին տրամադրվող դոտացիաների և սուբվենցիաների
համեմատական վերլուծությունը



□ Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին

□ Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ

Գծապատկեր 1-ից երևում է, որ վերջին տարիների ընթացքում սուբվենցիաների կտրուկ աճ է նկատվել:

ՀՀ-ում կա շուրջ 914 համայնք: Աղյուսակ 2-ի տվյալները ներկայացնում են մարզային կտրվածքով ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխումը:

¹ «Պետական բյուջեի մասին» 2000-2011թթ. օրենքները:


2011թ. ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը
ըստ մարզերի համայնքների հանրագումարի

	Ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը (մլն դրամ)	Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ	Համայնքների թիվը
Երևան քաղաք	8,969.4	27.6	
Արագածոտնի մարզ	1,554.5	4.8	114
Արարատի մարզ	2,927.4	9.0	97
Արմավիրի մարզ	2,912.1	9.0	97
Գեղարքունիքի մարզ	2,886.3	8.9	92
Լոռու մարզ	3,081.9	9.5	113
Կոտայքի մարզ	2,855.5	8.8	67
Շիրակի մարզ	3,294.0	10.1	119
Սյունիքի մարզ	1,863.7	5.7	109
Վայոց Ձորի մարզ	664.7	2.0	44
Տավուշի մարզ	1,478.6	4.6	62
ԸՆԴԱՄԵՆԸ	32,488.1	100.0	914

Այդ դոտացիաների 27.6%-ը բաժին է ընկնում Երևանին, 10.1%-ը Շիրակի մարզի համայնքներին (գծապատկեր 2):

Գծապատկեր 2

2011թ. ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարի բաշխումը
ըստ մարզերի համայնքների



Աղյուսակ 3-ի տվյալների հիման վրա կատարված վերլուծությունը ցույց է տալիս պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող

դոտացիաների տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում և տրվում է համեմատական վերլուծություն այլ ծախսերի հետ:

Աղյուսակ 3

Պետական բյուջեի ծախսերի և ՀՆԱ-ի ցուցանիշների դինամիկան
2008-2011թթ.


	2008	2009	2010	2011
Առողջապահություն	54.5	66.1	55.2	62.5
Կրթություն	103.7	126.9	99.9	108.5
Սոցիալական պաշտպանություն	219.2	252.5	244.4	272.6
Պաշտպանություն	125.4	149.6	135.7	140.6
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ	21.00	27.50	32.40	32.40
Ընդհանուր ծախսեր	822.1	945.4	935.5	998.6
ՀՆԱ	3646.1	3102.8	3214.6	3763.5

Դիտարկենք համայնքներին տրամադրվող դոտացիաների կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի կշռում, որը կազմում է 3%, իսկ, օրինակ, առողջապահության ծախսերը՝ 6% (գծապատկեր 3-4):


Դիտարկվել է նաև ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի տոկոսը (գծապատկեր 5), ըստ որի դոտացիաները կազմել են ՀՆԱ-ի 0.9 տոկոսը:

Գծապատկեր 3


Պետական բյուջեի ծախսերի դինամիկան 2008-2011թթ.



Պետական բյուջեի ծախսերի առանձին տեսակների կշիռը ընդհանուրի մեջ



Պետական բյուջեի ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %



Ընդհանուր առմամբ, կատարված ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայկական համայնքները շարունակում են ֆինանսապես կախված մնալ կառավարությունից, քանի որ նրանց 90%-ը դոտացիա է ստանում: Ճգնաժամի պայմաններում հանրապետության համայնքներում 2009–2010թթ. արձանագրվել է սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների աճ: Ընդ որում, կառավարությունը համայնքներին զարգացման ծրագրերի համար գումար տրամադրելիս հիմնական չափանիշ պետք է ընտրի ոչ թե համայնքի կարիքները կամ համայնքի լավ ղեկավարումը, այլ որ՝ ընտրություններում համայնքապետի ունեցած դերակատարությունն ու գործադրած ջանքերը՝ հոգուտ իշխող վարչակազմի, ինչպես նաև՝ մարգպետի երաշխավորությունը, որն, իհարկե, հիմնված է նրա անձնական համակրանքի վրա: